ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» մարտի 2015թ. N-------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2015 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.270-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող Խաղաղ Դոնի փողոցի հ.47 շենքի հ.8՝ 45.09 քմ մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.20112014-01-0200 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Ասյա Խաչատրյանին, Նարեկ Բաղդագյուլյանին, Զարուհի Բաղդագյուլյանին, Հայկ Բաղդագյուլյանին, Միքայել Բաղդագյուլյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ասյա Խաչատրյանը, Նարեկ Բաղդագյուլյանը, Զարուհի Բաղդագյուլյանը, Հայկ Բաղդագյուլյանը և Միքայել Բաղդագյուլյանը դիմել են Երևանի քաղաքապետարան՝ Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Խաղաղ Դոնի փողոցի հ. 47 շենքի հ.8՝ 45.09 քմ ընդհանուր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով անհատույց օտարելու (նվիրելու) խնդրանքով:

Խաղաղ Դոնի փողոցի հ. 47 շենքի հ.8՝ 45.09 քմ ընդհանուր մակերեսով բնակարանը համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ. 20112014-01-0200 վկայականի տվյալների հանդիսանում է Երևան համայնքի սեփականություն:

Աշխատավորների դեպուտատների Երևանի Լենինյան շրջանային սովետի գործադիր կոմիտեի 1959 թվականի որոշման հիման վրա վերոնշյալ բնակարանի համար քաղաքացի Զարուհի Բաղդագյուլյանին տրամադրվել է միասնական օրդեր, վերջինս 2011 թվականի օգոստոսի 22-ին մահացել է /հիմք հ.068148 մահվան վկայական/:

Էրեբունի վարչական շրջանի «Արգիշտի» համատիրության կողմից 29.01.2015թ. տրված տեղեկանքի համաձայն՝ հանգուցյալ Զարուհի Բաղդագյուլյանը Ասյա Խաչատրյանի /հարսը/, Նարեկ Բաղդագյուլյանի /թոռը/, Զարուհի Բաղդագյուլյանի /թոռնուհին/, Հայկ Բաղդագյուլյանի /թոռը/ և Միքայել Բաղդագյուլյանի /տղան/ հետ համատեղ մինչև մահը բնակվել է վերը նշված հասցեում, սակայն անցած ժամանակահատվածում չի կարողացել բնակարանի նկատմամբ ձևակերպել իր սեփականության իրավունքը:

Բնակչության պետական ռեգիստրում հաշվառման մասին հ. 447445 տեղեկանքի համաձայն՝ Ասյա Խաչատրյանը, Նարեկ Բաղդագյուլյանը, Զարուհի Բաղդագյուլյանը, Հայկ Բաղդագյուլյանը և Միքայել Բաղդագյուլյանը հաշվառված են վերոնշյալ բնակարանում, իսկ Էրեբունի վարչական շրջանի «Արգիշտի» համատիրության կողմից 29.01.2015թ. տրված տեղեկանքի համաձայն՝ Միքայել Բաղդագյուլյանը 1976 թվականից իր ընտանիքի հետ միասին բնակվում է տվյալ բնակարանում:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն ստորաբաժանման կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն Միքայել Բաղդագյուլյանը անվամբ անվամբ Հայաստանի Հանրապետության տարածքում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ:

Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի հ. 270-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ Ծրագրի 4-րդ կետի:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և/կամ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի հ.270-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և/կամ փաստական հանգամանքները, ուստի անհրաժեշտություն է առաջացել ընդունելու Երևանի ավագանու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ